

## **ՀՀ Արարատի մարզպետ Արամայիս Գրիգորյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա կապակցությամբ**

31.08.2017



### **Սիրելի՛ դպրոցականներ, մանկավարժներ, ծնողներ**

Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի օրվա կապակցությամբ:

Կրթության հազարամյա պատմություն ունեցող մեր ժողովուրդն առանձնահատուկ հոգատարություն ունի դպրոցի և ուսուցչի հանդեպ: Գիտելիքի և կրթության ձգտումը հայի ազգային բնավորության բաղկացուցիչն է, երկրի զարգացման ու հզորացման կարևորագույն գրավականը:

Այսօր գիտելիքն ու կրթությունն ամենաթանկ կապիտալն ու մարդկային առաջընթացի ամենակարևոր նախապայմաններն են: Պետության վաղվա օրը երաշխավորված է, եթե հասարակությունը կրթված է: Մենք բոլորս քաղաքացիական բարձր պատասխանատվություն ունենք մասնակցելու հայրենասեր, բանիմաց ու կիրթ հասարակության կայացմանը:

Սիրելի՛ դպրոցականներ, այս հանդիսավոր օրը ողջունելով բոլորիդ՝ լիահույս եմ, որ ուսման մեջ ունեցած ձեռքբերումներով ու հաջողություններով դուք կկառուցեք մեր վաղվա օրը՝ մեր երկրի ապագան:

Սիրելի՛ մանկավարժներ, ծնողներ, շնորհավորում եմ Ձեզ և շնորհակալություն հայտնում՝ Հայաստանի վաղվա քաղաքացուն դաստիարակելու պատասխանատու առաքելությունը պատվով կատարելու համար:

**Արամայիս Գրիգորյան**  
**ՀՀ Արարատի մարզպետ**